

нации, когда идея завоевания коллективной свободы путем вооруженной борьбы начинала занимать сердца и умы лучших сынов и дочерей народа. В то же время лидеры нации старались ознакомить мировое сообщество с действительным положением дел в азиатской Турции и получить столь желанную поддержку. Эти два направления, а именно - постоянные контакты с внешним миром и перманентная вооруженная борьба внутри империи определяли весь дальнейший ход национально-освободительного движения.

ՄԱՆՐԻԿԱԶԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ՈՒ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ (1888-1920-ական թթ. առաջին կես)

ԲՆԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ

- 1 Протоколы Национального Собрания. 1878-1879. Константинополь 1878. С.62.
- 2 Сборник договоров России с другими государствами. М. 1952. С.168-169.
- 3 Протоколы... 1878-1879. Константинополь 1878. С.63-64.
- 4 Протоколы... 1878-1879. Константинополь 1878. С.187.
- 5 Центральный Государственный исторический архив Р. А. (ЦГИА) ф.56.оп16. д24.лл 25об-26. Сарухан. Армянский вопрос и национальная конституция в Турции 1860-1910 г. Т. I, Тифлис 1912. С.325-327.
- 6 Дж.С.Киракосян. Буржуазная дипломатия и Армения в 70-ые годы XIX века. Ереван 1981. С.201.
- 7 ЦГИА ф. 56 оп. 16 д. 24 л. 24-об. Сарухан. Указ.соч. С.330-332.
- 8 "Северный вестник" СПб 1878. №70.
- 9 "Голос" СПб 1878. №146.
- 10 "Мурч". Тифлис 1907. №2. С.64-65.
- 11 М.Чераз. Армянский вопрос. Венеция, 1917. С.12-13.
- 12 М.Орманян. История нации. Бейрут 1961. т. 3. С.5035.
- 13 Протоколы... 1878-1879. Константинополь 1878. С.65.
- 14 М.Чераз. Армения и Италия. Константинополь 1879. С.28.
- 15 Епископ Мушег. Армянская община Манчестера. Бостон 1911. С.96.
- 16 М.Чераз. Армения и Италия. Константинополь 1879. С.10.
- 17 Там же. С.37-42.
- 18 Там же. С.18-19.
- 19 Там же. С.40-42.
- 20 Там же. С.43.

- 21 Сарухан. Указ.соч. С.370.
- 22 Там же. С.370.
- 23 Там же. С.371-372.
- 24 Епископ Мушег. Указ.соч. С.68.
- 25 Сарухан. Указ.соч. С.384-385.
- 26 Протоколы... 1878-1879 гг., Константинополь 1878 г. С.175.
- 27 Епископ Мушег. Указ.соч. С.87-89.
- 28 Там же. С.102-103.
- 29 М.Чераз. Армянский вопрос. Венеция 1917. С.23-24.
- 30 Сарухан. Указ.соч. С.389.
- 31 "Анаит" Париж 1907. №10-12. С.168.
- 32 Сарухан. Указ.соч. С.387-390.
- 33 Там же. С.387.
- 34 А.Алпояджян. Минас Чераз, его жизнь и деятельность. Каир 1927. С.302.
- 35 Сарухан. Указ.соч. С.391.
- 36 Епископ Мушег. Указ.соч. С.105.
- 37 Правительственный вестник" СПб. 14.06.1878 г.
- 38 Протоколы... 1878-1879. Константинополь 1878. С.8.
- 39 Герцог Аргайльский. Ответственность Англии в Восточном вопросе. СПб 1908. С.75.
- 40 Там же. С.24.
- 41 Дж.С.Киракосян. Указ.соч. С.260.
- 42 М.С.Габриелян. Армянский кризис и возрождение. Бостон 1905. С.23-24.
- 43 Б.А.Борян. Армения, международная дипломатия и СССР. М.-Л.1928. Ч.I. С.208.
- 44 Дж. Киракосян. Указ. соч. С 160.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Центральный Государственный исторический архив Р. А. (ЦГИА) ф.56.оп16. д24.
2. Алпояджян. А. Минас Чераз, его жизнь и деятельность. Каир 1927.
3. Борян.Б.А Армения, международная дипломатия и СССР. М.-Л.1928. Ч.I.
4. Габриелян.М.С. Армянский кризис и возрождение. Бостон 1905.
5. Герцог Аргайльский. Ответственность Англии в Восточном вопросе. СПб. 1908.
6. Епископ Мушег. Армянская община Манчестера. Бостон 1911.
7. Киракосян.Дж.С. Буржуазная дипломатия и Армения в 70-ые годы XIX века. Ереван 1981.
8. Орманян.М. История нации. Бейрут 1961. т. 3.
9. Протоколы Национального Собрания. 1878-1879. Константинополь 1878.
10. Сарухан. Армянский Вопрос и национальная конституция в Турции 1860-1910. Тифлис 1912.
11. Сборник договоров России с другими государствами. М. 1952.
12. Чераз.М. Армения и Италия. Константинополь 1879.
13. Чераз.М. Армянский вопрос. Венеция 1917.
14. "Анаит" Париж 1907.
15. "Голос" СПб. 1878.
16. "Мурч". Тифлис 1907.
17. "Правительственный вестник" СПб. 1878 г.
18. "Северный вестник" СПб. 1878.

Տասնամյակների ընթացքում հասարակական-տնտեսական, պատմաքաղաքական, ինչպես նաև մշակութային հանգամանքների բերումով ԱՄՆ մեկնած հայ գաղթականության համախմբման և որպես համայնք կազմակերպման գործում ազգապահպան այլ կառույցների կողքին (եկեղեցի, դպրոց և այլն) առանցքային դեր ու նշանակություն է ունեցել նաև հայ մամուլը:

Սկզբնավորվելով Նոր երկրում հայության թվի սովորացմանը զուգընթաց՝ ամերիկահայ մամուլը գնահատելի աշխատանք է իրականացրել օտարության մեջ հայերի հոգևոր-մշակութային կյանքի զարգացման, ուժացման մշտական վտանգը դիմակայող հայության սովորական գաղափարների ազգային լեզուն, ոգին ու նկարագիրը, սովորույթներն ու բարքերը մշտադրույթ պահելու ուղղությամբ, խթանել հայրենի երկրի ու ժողովրդի հետ կապի հարատևմանը:

Հիմնադրվելով ինչպես անհատ հայերի, այնպես էլ ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, միությունների և ընկերությունների նախաձեռնությամբ՝ ամերիկահայ մամուլը գոյատևել է գլխավորապես բարերարների ու բաժանորդների նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ: Դրանց դադարեցումը, ինչպես նաև ներկուսակցական վեճերն ու կռիվները ճակատագրական վախճան են ունեցել նաև հայ մամուլի հետագա գոյության համար:

Ամերիկահայ առաջին պարբերական մամուլի հիմնադրման պատիվը պատկանում է 1888 թ. ուսանելու նպատակով ԱՄՆ մեկնած տիգրանակերտցի Հայկակ Էկինյանին, որը սեփական թերթ հրատարակելու մտադրությամբ Վենետիկի Միսիթարյան միաբանությունից Ամերիկա էր փոխադրել հայատառ տպարան:¹ 1888 թ. Ջերսի Սիթիում «ամերիկահայ լրագրության հայր» Հ. Էկինյանի ջանքերով լույս է տեսել ԱՄՆ-ում հայերեն առաջին թերթը՝ ամենամսյա «Արեգակը», որը, հակառակ իր կարճատև գոյության (ընդամենը 12 համար), արժանի տեղ է գրավում գաղութի մամուլի պատմության մեջ (ամերիկաբնակ 36 էթնիկ խմբերի կողմից հրատարակված առաջին պարբերականների շարքում «Արեգակը» 26-րդն էր՝ 1739 թ. լույս տեսած առաջին գերմաներեն լրագրից հետո):² Հ. Էկինյանի հրատարակչական բեղուն գործունեության շնորհիվ հրատարակվել են մի շարք այլ թերթեր և՛ «Սուրհանդակ» շաբաթաթերթը (1889-1890 թթ., Ջերսի Սիթի)³, երկշաբաթական «Ազատութիւնը» (1890-1892 թթ., Նյու Յորք), «Տիգրիսը» (1897-1899 թթ., Նյու Յորք), «Քաղաքացին» (1902-1909 թթ., Ֆրեզնո), «Նոր կեանքը» (1912 թ., Ֆրեզնո):

Ավելի երկար էր գոյատևել բժիշկ ու ազգային գործիչ, ակնեցի Մ. Սմբատ Գաբրիելյանի հրատարակած «Հայք» երկամսյա պարբերականը (1891-1898 թթ., Նյու Յորք): Տարբեր ժամանակահատվածներում ազգասեր ու նվիրյալ մի խումբ անհատ հայերի ջանքերով ԱՄՆ-ում սկսել են լույս տեսնել բազմաթիվ այլ պարբերականներ ևս, որոնք, անկախ իրենց փոքրաթիվության ու կարճատևության, զգալի ներդրում են ունեցել ամերիկահայ մտավոր կյանքի զարգացման գործում, մանավանդ որ գոյատևել են՝ դիմակայելով թե՛ ֆինանսական և թե՛ խմբագրական լուրջ դժվարություններ: Դրանք էին՝ «Արմենիան» (1890-ական թվ., Բոստոն), «Հայոց աշխարհը» (1895 թ., Նյու Յորք), «Կայծակը» (1895-1896 թթ., Լինն), «Եփրատը» (1897 թ., Ուստոր-Նյու Յորք) և այլն: Առաջին եկ այս թերթերից մի քանիսը տպագրական միջոցների ու հնարավորությունների բացակայության պատճառով լույս են տեսել նաև խմորատիպ, ձեռագիր տեսքով: Հետագայում տեխնիկական բարվոք պայմանների ի հայտ գալով՝ ամերիկահայ մամուլն ընդունել է իր ժամանակի պարբերականներին հատուկ ձև ու համապատասխան բովանդակություն:

ԱՄՆ-ում հայ քաղաքական կուսակցությունների ի հայտ գալու հետ մեկտեղ ծնունդ են առել բազմաթիվ նոր պարբերականներ՝ կուսակցական պաշտոնաթերթեր, որոնք, ի տարբերություն առանձին անհատների կողմից հրատարակվածների, գտնվել են իրենց կուսակցությունների մշտական հովանավորության ներքո, ստացել ֆինանսական աջակցություն, ունեցել արհեստավարժ խմբագիրներ, ինչպես նաև՝ երկրի ներսում ու դրսում գործող զգալի թվով թղթակիցներ, որոնց լավ կազմակերպված գործունեությամբ ու թերթի տպաքանակի տարածման համակարգով էլ պայմանավորվել է կուսակցական մամուլի հեղինակությունն ու ժողովրդականությունը, ապահովվել երկարակեցությունը:

Ամերիկահայ կուսակցական մամուլի առաջնեկներն էին՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ «Չայն հայրենեացը» (հիմնադիր՝ Գ. Չիթյան, 1899-1907 թթ., Նյու Յորք, Ուստոր, Բոստոն) և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության «Հայրենիքը» (հիմնադիր՝ Պ. Չարչյան, 1899 թ. - մինչև օրս, Նյու Յորք, Բոստոն): 1922 թվականից Բոստոնում սկսել է լույս տեսնել նաև «Հայրենիք» ամսագիրը (հիմնադիր՝ Ռ. Դարբինյան): Հնչակյան կուսակցության պառակտումով Հին հնչակյան ամերիկահայ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության պաշտոնաթերթն է դարձել «Երիտասարդ Հայաստանը» (հիմնադիր՝ Ս. Սալան-Գյուլյան, 1903 թվականից, Բոստոն, Նյու Յորք, Չիկագո, Փրովիդենս, նորից՝ Նյու Յորք), իսկ Վերակազմյալ հնչակյան կուսակցությանը՝ «Հնչակը» (1890-ական թվականների սկիզբ, 1904 թ., 1907 թ., Ուորքեսթեր, Բոստոն): Վերջինս հանդիսացել է ԱՄՆ-ում լույս տեսնող հնչակյան առաջին պարբերաթերթը, որի համարների գերակշիռ մասը տպագրվել է Եվրոպայի տարբեր քաղաքներում: Սրանց հաջորդել են Սահմանադրական-դեմոկրատական կուսակցության «Ազգը» (հիմնադիր՝ Ս. Պարթևյան, 1907-1921 թթ., Բոստոն) և Վերակազմյալ հն-

Ամերիկահայ կուսակցական մամուլի շարքում կային նաև բանվորական, կոմունիստական բազմաթիվ պարբերականներ ևս, որոնք իսկապես եղել են ԱՄՆ-ի բանվորական կուսակցության հայկական հատվածի պաշտոնաթերթեր: Դրանց թվում էին «Գործաւորը» (1916-1921 թթ., 1921-1926 թթ., Դետրոյտ, Նյու Յորք), «Նոր հո- Յորք», «Գործաւորը» (1924 թ., Նյու Յորք), «Պրոլետարը» (1924-1929 թթ., Նյու Յորք), «Բանւորը» (1922-1938 թթ., Նյու Յորք), «Գործաւորը» (1924 թ., Նյու Յորք), «Պրոլետարը» (1924-1929 թթ., Նյու Յորք), «Նոր աշխարհը» (1924-1929 թթ., Նյու Յորք): Ամերիկահայ չեզոքների՝ Ոչ կուսակցականների, միությունը հրատարակել է «Արշալոյս» (1920-1922 թ., Նյու Յորք), Հայ ազատական միությունը՝ «Ազատ կարծիք» (1922 թ., Նյու Յորք) պարբերականները:

Միաժամանակ, ամերիկահայ կուսակցական պարբերականներն ազգային և այլ իրադարձությունների հո-
բեյանական առիթներով հրատարակել են պարբերաբար կամ ամենամյա լույս տեսնող բացառիկ համարներ:
Ամերիկահայ թերթերը, որոնք, ԱՄՆ-ից բացի, լեզալ և անլեզալ ճանապարհներով տարածվում էին թուր-
քիայում, Ռուսաստանում, ինչպես նաև եվրոպական ու հայաշատ այլ երկրներում, իրենց էջերում գլխավոր տեղ
էին հատկացնում ազգային խնդիրներին, անդրադառնում օտար բռնակալների գերիշխանության տակ հեծող
հայրենի հեռավոր ժողովրդի թշվառ վիճակին ու նրա ազատագրման ուղիներին՝ շատ հաճախ նույնիսկ տուրթ
տալով կուսակցական անհարկի վիճաբանությունների: Թերթերում տպագրվել են հայոց պատմությանը, գրա-
կանությանը, լեզվին ու մշակույթին առնչվող հոդվածներ, հայ և օտար գրականության նմուշներ, ամերիկահայ
մշտապես սատարելու կոչ անող նյութեր և այլն: Ընդ որում, երկրի արևմտակողմի հայ կուսակցական մամուլը,
ելենյով այդտեղ հայության աստիճանաբար հիմնավորվելու անառարկելի փաստից, ավելի հակված էր նրանց
համար լուսաբանել ամերիկյան ապրելակերպին, լեզվին, կարգ ու կանոնին, հպատակությանն ու կյանքի բար-
քերին հարմարվելու հետ կապված հարցերը, մինչդեռ, արևելակողմի մամուլը մշտադրուս էր պահում ամե-
րիկահայության հայրենիք վերադառնալու փափագը՝ ԱՄՆ-ը համադրելով հայ և օտար մշակույթի տար-
կայան:

Ամերիկահայ առաքելական եկեղեցու գաղափարներն արտահայտող պարբերականները, զերծ լինելով անարանական եկեղեցու ունեցած ամերիկյան հովանավորությունից, սկսել են լույս տեսնել համեմատաբար վերջի ուշ և գոյատևել՝ առավել կարճ: ԱՄՆ-ի հայ առաքելական եկեղեցին հրատարակել է «Դղեակ Լուսաուր» (1909-1910 թթ., Բորջիո Քաթինո), «Ամսաթերթիկ» (1912 թվականից, Նյու Յորք), «Եկեղեցի Յայաստան» (1916-1921 թթ., Նյու Յորք), «Լուսաուրիչ» (1916-1920 թթ., Ղետրոյտ), «Էջմիածին» (1918-1919 թթ., Նյու Յորք), «Ծիածան» (1924 թ., 1924-1927 թթ., Սան Ֆրանցիսկո, Ղետրոյտ) և այլ պարբերականները:

Գաղութահայ, ազգային, գրական, գիտական, իմաստասիրական, հասարակական, քաղաքական կյանքին առնչվող բազմաբնույթ հարցեր էին շոշափվում «Լոյս» (1901-1907 թթ., 1907-1908 թթ., Բենքիիչ, Բոստոն), «Գրասէր» (1904 թ., Ռոքսբերի), «Արծիւ» (1905-1906 թթ., 1908 թ., Բոստոն), «Շանթ» (1910 թ., 1918 թ., Բոստոն), «Ամերիկա» (1911 թ., Բոստոն), «Ամերիկահայ տարեցոյց» (1912-1913 թթ., Բոստոն), «Պայքար» (1914 թ., Ֆիլադելֆիա), «Ազատ» (1918-1919 թթ., Նյու Յորք), «Տաւրոս» (1918-1919 թթ., Բոստոն), «Սիսուան» (1918-1920 թթ., Ֆրեզնո), «Փիւնիկ» (1918-1920 թթ., Բոստոն), «Կռունկ» (1919-1927 թթ., Ֆիլադելֆիա), «Փարոս» (1922 թ., Ֆիլադելֆիա), «Նաւասարդ» (1922 թ., Նյու Յորք), «Հորիզոն» (1923-1924 թթ., Ֆիլադելֆիա), «Ամերիկահայ իմաստասիրական» (1925-1927 թթ., Բոստոն) և այլ պարբերականներում:

Առողջապահության ու բժշկության խնդիրներ էին քննարկվում «Բուժակ» (1917-1919 թթ., 1900-1968 թթ., Փրովիդենս-Բոստոն, Նյու Յորք), «Հայ սիրտ» (1923-1932 թթ., Ֆիլադելֆիա), «Հայ բժիշկ» (1924-1926 թթ., Բոստոն) և նման այլ պարբերականներում:

ԱՄՆ-ի հայերի շրջանում լայն տարածում ուներ նաև ազգային երգիծական սանուկը: Մասնաշվառ պալիթրոնականներից էին՝ «Չուռնան» (1910-1911 թթ., Բոստոն), «Դալլալիկը» (1910 թ., Բոստոն), «Ցախաւելը» (1915-1920 թթ., 1918-1920 թթ., Նյու Յորք, Բոստոն), «Չարլի Չափլինը» (1916 թ., Փորոլիդենս), «Հայելին» (1918 թ., Թրոյ), «Ատենապետը» (1919 թ., Չիկագո), «Կենդ-Կոն» (1920 թ., Նյու Յորք), «Աւետիսը» (1921 թ., Ֆրեզնո), «Ծիծաղը» (1921 թ., Ֆրեզնո), «Փորձանքը» (1922-1923 թթ., Դետրոյտ), «Չուարթապատումը» (1924 թ., Բոստոն) և այլն:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը և ԱՄՆ-ում ունեցել է իր անգլիալեզու մամուլը՝ հրատարակելով «Asbarez» (1908 թվականից, Գլենդեյլ), «Hairenik Monthly» (1922 թ., 1934 թվականից, Բոստոն) պատրոնաթերթերը:

Ամերիկյան հասարակայնության ու ղեկավար շրջաններին Հայ դատի հետ առնչելուն, նրանցից բարոյա-
կան, քաղաքական ու նյութական աջակցություն ակնկալելուն էին ուղղված Հայ ազգային միության «The
Armenian Herald» (1917-1919 թթ., Բոստոն) և Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի «Information
Bureau» (1919-1920 թթ., Նյու Յորք) պարբերականները:

Կրոնական անգլիալեզու մամուլի շարքում աչքի էին ընկնում ամերիկահայ ավետարանական եկեղեցու հրատարակությունները: Առաջին այդպիսի պարբերականներից էր Նյու Յորքի Հայ ավետարանական եկեղեցու տեղեկագիրը՝ «The Armenian Evangelical Church of N.Y. Bulletin»-ը (1912 թվականից, Նյու Յորք):

ԱՄՆ-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության անգլիալեզու հրատարակություններից էին «Hoosharar»-ը (1914 թվականից, Սեդլ Բրուք), «Armenian General Benevolent Union Bulletin»-ը (1921 թվականից, Յունյոն Սիթի): Ամերիկահայ ուսանողական միությունը նույնպես ուներ իր անգլիալեզու պաշտոնաթերթը՝ «The Armenian Student»-ը (1919 թ., Նյու Յորք):

ԱՄՆ-ում հաստատված կիլիկեայ թրքախոս հատվածը ևս ունեցել է իր պարբերական մամուլը: Այդտեղ նրանց համար հայերենով և հայատառ թուրքերենով լույս են տեսել «Կիլիկիա» (1916 թ., 1917-1919 թթ., Նյու Յորք), ինչպես նաև միայն հայատառ թուրքերենով «Կիլիկիա Սալնամեսի» (1918 թ., Նյու Յորք), «Բահնիմա» (1919-1933 թթ., Նյու Յորք) բազմաբնույթ պարբերականները:

ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում հայ մամուլի ի հայտ գալով սկզբնավորվել են ամերիկահայ առաջին տպարանները, ուր, պարբերականներից բացի, հրատարակվել է նաև գաղութահայ բազմաբնույթ գրականություն: Այսպես, Ջերսի Սիթիում գործել են «Արեգակ», «Հ. Էկինեան», Նյու Յորքում «Հ. Էկինեան», «Կոչնակ», «Արմենիա», «Երիտասարդ Հայաստան», «Արարատեան», «Մ.Ս. Գաբրիելեան», «Արաքս», «Էլմաս Սաթին», «Լրաբեր», «Հայրենիք», «Հայրենիք» լրագրի», Բոստոնում «Հայրենիք» լրագրի», «Ձայն հայրենեաց», «Ազգ» լրակ», «Շանթ», «Թումանեան եղբայրներ», «Կիլիկիա», «Պայքար» լրագրի», «Փրես», «Հի-Ասպարեզ», «Փրկութիւն», «Նոր օր», Փրովիդենսում «Պահակ», Չիկագոյում «Երիտասարդ Հայաստան», Կալիֆոռնիայում «Ա. Տունանեան», Ֆիլադելֆիայում «Միածինեան եղբայրներ», Դետրոյտում «Հիմարար», Ռոքսբերիում «Փիլիպոսեան և Տիրանեան», Բեյսիդում «Երիտասարդ Հայաստան» տպարանները և այլն:⁵

Այսպիսով, ԱՄՆ-ում սկզբնավորված ու ծավալված հայ մամուլն ու տպագրությունը, տարիների ընթացքում ենթարկվելով ժամանակի, միջավայրի, ինչպես նաև ներգաղութային կյանքի տարաբնույթ պահանջների անմիջական ազդեցությանը, կազմակերպվել ու դարձել են օտար ափերում հայապահպան կարևոր գործոններ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Mirak, R. *Tom Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I*. Cambridge, 1983, p. 248.
- 2 Մուշեղ Եպիսկոպոս, *Ամերիկահայ տարեցոյցը*, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 268: Wynar, L.R., Wynar, A. *Encyclopedic Directory of Ethnic Newspapers and Periodicals in the United States*. Littleton, 1976, p. 16.
- 3 Այսուհետև հիշատակվող պարբերական մամուլի վերաբերյալ տվյալները, ի շարքս հիշատակվող այլ գրականության, վերցված են նաև հետևյալ ժողովածուներից. Բաբլոյան Մ.Ա., *Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ (1794-1980)*, Երևան, 1986: Լեւոնեանց Գ., *Հայոց պարբերական մամուլը. Պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1794-1894)*, Ալեք. սամբրապոլ, 1895: Լևոնյան Գ., *Հայ պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ հայերեն լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934)*, Յերեվան, 1934: Կարապետյան Հ.Ռ., *Լիակատար ցուցակ հայերեն լրագրության որոնք կը գտնուին Մխիթարեան Մատենա-դարանին մէջ ի Վիեննա, 1794-1921*, Վիեննա, 1924: Կիրակոսյան Ա., *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, 1970: Պետրոսյան Հ., *Հայ պարբերական մամուլի բիրիդգրաֆիա (1794-1900)*, Կ. Ի, Երևան, 1956: Լույսի, *Հայ պարբերական մամուլի բիրիդգրաֆիա (1900-1956)*, Կ. Ի, Երևան, 1957: Պոստոլեան Հ.Ս., *Հայ մամուլը տասներեկինգ տարուան մէջ. 1894-1909 թթ.*, Վենետիկ, 1909:
- 4 Մուշեղ Եպիսկոպոս, *Գլխ. աշխ.*, էջ 145: Malcom, V.M. *The Armenians in America*. Boston, Chicago, 1919, p. 124.
- 5 Կիրակոսյան Ա., *Գլխ. աշխ.*, էջ 617, 618: Բաբլոյան Մ.Ա., *Գլխ. աշխ.*, էջ 410: Թեոփիլ, *Տիպ ու տար*, Կ. Պոլիս, 1913, էջ 186-188:

КНАРИК Р. АВАКЯН - АМЕРИКАНО-АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ И ТИПОГРАФИИ (1888-первая половина 1920-ых годов) - В деле сплочения армянских эмигрантов, выехавших в США в течение десятков лет в следствие общественных, экономических, историко-политических и культурных обстоятельств, для их интеллектуального и духовного развития, а также в образовании национально-самосохраненной общины, стержневую роль и значение имели местные армянские типографии и периодическая печать (в 1888 г. вышла в свет первая американско-армянская газета – ежемесячный Таргак/УТСолнышко/У). Издающаяся в США трехязычная (армянский, английский, написанный на армянском – турецкий) разнородная периодическая – печать и литература (национальная, научная, художественная, философская, общественная, политическая, религиозная, церковная, экономическая, торговая, по здравоохранению, детская, молодежная, образовательная, юмористическая и т. д.) издавались как с помощью отдельных частных лиц, так и с помощью партий, организаций, обществ и ассоциаций.

ՀՐԱԶԴԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(պատմաբանասիրական ակնարկ)

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» որպես տեղանուն նշված են.

«Ախտա» անունով մեկ օկրուգ՝ Արևմտյան Հայաստանում, յոթ գյուղեր՝ չորսը Արևմտյան Հայաստանի Երզրումի նահանգի Բայազետ գավառում (Մեծ Ախտա, Վերին Ախտա, Միջին Ախտա, Ներքին Ախտա), մեկը Վայոց Ձորի (Վայքի շրջանում) և երկուսը նախկին Ախտայի շրջանում ա) Ներքին Ախտա (ներկա Յրազդան), բ) Վերին Ախտա (ներկա Լեռնանիստ), որը նախկինում կոչվել է Ինակդաղ (Մենակսար գյուղից հարավ-արևելք Գեղամա լեռնաշղթայի բազուկ Մենակսարի անունով), Կոթգորան, Քոթղորեն, Բոզու դաղ, Ի-նաքդաղ, Ինեքդեղ, Կովասար (բնակիչների նախնիները եկել են Պարսկահայաստանի Խոյի, Մակուի և Սալմաստի շրջաններից):

Ախտախան անունով մեկ գյուղ՝ Ջանգեզուրի գավառի Մեղրու շրջանում (ներկայիս գյուղ Շվանիծոր), Ախտախանա-Ախտախան անունով երկու գյուղ՝ մեկը Պարսկաստանի Սալմաստ գավառում (Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք Դիլման քաղաքից 8 կմ արևելք), մեկը Ջանգեզուրի Կապանի շրջանում (ներկայումս գյուղ Չորաստան), Ախտարաշան անունով՝ մեկ գյուղ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում:

Ախտա կամ Ախտաչայ անունով նշված են նաև երեք գետ՝ Արածանիի, ավազանում (սկիզբ է առնում Հայկական Պար լեռնաշղթայի հարավային լանջերից Վերին Ախտա գյուղի մոտակայքից և թափվում Արաքս), Արաքսի ավազանում (սկիզբ է առնում Վայքի լեռնաշղթայից և թափվում Արաքս), Յրազդան գետի ավազանում (սկիզբ է առնում Վերին Ախտա (ներկա Լեռնանիստ) գյուղի վերևի շրջակա աղբյուրներից և թափվում Յրազդան գետը: «Ախտա գետի անունը առաջացել է հին Աղտից ձոր անվան աղավաղումից 5-վերստանոց քարտեզում նշված է Ախտաչայ, իսկ 10-վերստանոցում՝ Ախտչայ» (Տեղանունների բառարան, հատ. 1, էջ 122):

Կան նաև երկու լեռ՝ մեկը Հայկական Պարի կենտրոնական հատվածում, մեկը Վայքի (Վայոց ձորի) շրջանում, մեկ լեռնանցք Հայկական Պարի կենտրոնական հատվածում (Կողբից հարավ-արևմուտք) և մեկ ձոր (Կիրճ)՝ Արաքս գետի Արփա վտակի ավազանում:

Ներքին Ախտա գյուղը՝ 1930թ. վերանվանվում է Ներքին Ախտայի շրջանի շրջկենտրոն, իսկ 1959 թ.՝ ք. Յրազդան: Հետո Յրազդան քաղաքին, որպես թաղամասեր միացվել են Աթարբեկյան (Քարվանսարա-Վանատուր), Աղբյուրակ (Աղփարա), Մաքրավանք, Ջրառատ

(Ոնդամալ-Մելքի գյուղ) և Կաքավաձոր (Ֆառուխ) հինգ գյուղերը, որոնց մասին ամենահին տեղեկությունները քաղել ենք Հովհաննես եպիսկոպոս Շախաթունյանցի: «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ» (1842թ.) և Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց նախիջևանցու «Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետ գավառ աշխատություններից:

Ախտա-Յրազդանի շրջանի բնակիչները եկել են Խոյից, Ալաշկերտից, Մակուից, Սալմաստից, Վանից, Բայազետից, Կարսից, Սասունից: Կոնկրետ Յրազդան քաղաքին միացված վերոհիշյալ հինգ գյուղ-թաղամասերի բնակիչների նախնիները ներգաղթել եկել են. Աղբյուրակ-Աղփարայի բնակիչները՝ Մակուի գավառի Օղակ գյուղից 1829թ. (Օղակից են գաղթել նաև Քաղսի գյուղի բնակիչները 1830թ.) և գյուղը հիմնել ու Աղբյուրակ են անվանել այդ տեղում՝ կամուրջից դեպի աջ, բլուրի հարավային ստորոտում շատ աղբյուրներ լինելու պատճառով (այդ աղբյուրները ներկայումս մնացել են Յրազդան լճի տակ): Մաքրավանքի բնակիչները՝ Մակուից ու Հին Բայազետից, Ջրառատ-Ոնդամալի բնակիչները՝ Ալաշկերտից, Կաքավաձոր-Ֆառուխի բնակիչները՝ Վանից ու Մակուից, իսկ Քարվանսարա-Վանատուրի բնակիչները՝ Վանի նահանգի Աթաղա, Աղբակ, Հայոց Ձոր (Խոշաք) գավառներից և մի քանի տուն էլ Մուշից, Մակուից ու Կարսից:

Պատմագիտական գրականության մեջ հիշվում է Ախտարաշան անունով բնակավայր: Կազմված է երկու բառերից՝ «*ախտար*» և «*աշան*»:

Ըստ Հ. Աճառյանի՝ *ախտար* - «աստղ, բախտ, աստղահմայ, ժամագետ»։ դրանից են՝ *ախտարակ* - «բնախոս, փիլիսոփա, բնություն, ի բնե, բնականից» և «*ախտարմուլ*» - աստղերը դիտելով գուշակություն անող, աստղերը հաշվող (ՀԱ ՀԱԲ 1971թ., հատ 1, էջ 100-101):

Է. Աղայանի մեկնությամբ *ախտարը* ծագել է «*ախտարը*»-ից, որ նշանակում է «աստղագուշակություն» (Էդ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հ.1, էջ 12): «Ախտար» կապված է պահլավերեն ախտար «կենդանակերպ, համաստեղություն» և պարսկերենի *ախտար* «աստղ, բախտ» բառերից: Ուշագրավ են *ախտարը-ախտար* նշանակում է «աստղագուշակություն, բախտի գուշակություն աստղերի միջոցով»: Այդ ախտարական «արվեստը» կիրառողներին անվանում էին դյուք, թովիչ, կախարհ, մոգ, վիուկ, հմայ, ձեռնածու, աղանդավոր և այլն: Այդ արվեստը կապված լինելով աստղաբաշխության հետ, կապված էր նաև բժշկական-բուժական արվեստի հետ՝ օգտագործելով բույսերի և հանքային նյութերի բուժական հատկությունները, հիվանդներին ներշնչելու մեթոդները և այլն: